ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ.՝ (-374 11) 514 004, էլ. փոստ՝ mayor@yerevan.am

ԲԱՑԱՐԿԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Լուծվող հարցի նկարագրությունը.

2022 թվականի ապրիլի 25-ին «ՌԱՏԿՈ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից ներկայացվել է Երևանի Ալիխանյան եղբայրների փողոցի հ.6/1 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի հ. 01/18-05/1-Մ-10735-761 աշխատանքային նախագծերի վերահամաձայնեցման վերաբերյալ դիմում (այսուհետ նաև՝ Դիմում):

Դիմումի հիման վրա հարուցվել է վարչական վարույթ, որի շրջանակներում լսումներ են հրավիրվել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետ Ա.Սեդոյանի կողմից:

Դավիթ Ազիզյանի կողմից 2022 թվականի օգոստոսի 2-ին գրավոր բացարկ է հայտնվել Ա.Սեդոյանին:

2. Բացարկի հակիրճ նկարագրությունը.

2022 թվականի օգոստոսի 2-ին Ա.Սեդոյանին Դավիթ Ազիզյանի կողմից ներկայացված բացարկը (այսուհետ նաև՝ Բացարկ) պատճառաբանվել է նրանով, որ Ա. Սեդոյանն ի պաշտոնե նախկինում մասնակցել է տվյալ գործի քննությանը և նախկինում հրապարակավ արտահայտվել է այն մասին, որ Երևանի Ալիխանյան եղբայրների փողոցի հ.6/1 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքը պետք է կառուցվի:

Ըստ Դավիթ Ազիզյանի՝ բացարկի համար հիմք է հանդիսանում նաև այն, որ Ա. Սեդոյանը կանխավ գնահատական է տվել պետական համալիր փորձաքննության հանձնաժողովի կողմից 14.06.2022 թվականին տրված թիվ 93 եզրակացության վերաբերյալ՝ հայտնելով, որ այլ փաստաթղթեր անհրաժեշտ չեն հարցի քննարկման համար:

3. Պատճառաբանական մաս.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի 24-րդ հոդվածով և 25-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ հիմքի առկայության դեպքում՝ վարչական մարմնի ղեկավարը, վարչական վարույթ իրականացնող պաշտոնատար անձը (եթե վարչական վարույթն իրականացնում է կոլեգիալ մարմինը, ապա կոլեգիալ մարմնի անդամը) պարտավոր է անհապաղ ինքնաբացարկ հայտնել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարույթի մասնակիցները կարող են գրավոր բացարկ հայտնել վարչական վարույթն իրականացնող պաշտոնատար անձին, իսկ օրենքով նախատեսված դեպքերում կոլեգիալ կազմով վարչական վարույթ իրականացնելիս՝ կոլեգիալ կազմի ցանկացած անդամի, եթե՝

ա) առկա է սույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը.

բ) մինչև գործի քննարկման ավարտը, տվյալ պաշտոնատար անձը կամ կոլեգիալ կազմի անդամը հրապարակայնորեն արտահայտվել է գործի հնարավոր ելքի մասին կամ գնահատական է տվել գործի փաստական հանգամանքներին կամ, մինչև ապացույցների հետազոտումը, կանխավ գնահատական է տվել դրանցից որևէ մեկին.

գ) տվյալ պաշտոնատար անձը կամ կոլեգիալ կազմի անդամը երբևէ գործել է ի շահ վարույթի մասնակիցներից որևէ մեկի.

դ) առկա են այլ հանգամանքներ, որոնք վկայում են գործի ելքով՝ տվյալ պաշտոնատար անձի կամ կոլեգիալ կազմի անդամի ուղղակիորեն կամ անուղղակիորեն շահագրգռված լինելու մասին կամ կասկած են հարուցում տվյալ գործի առնչությամբ նրա անաչառության նկատմամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Երևանի քաղաքապետն իր գործունեությունը կազմակերպում է (…) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի միջոցով:

«Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի երկրորդ պարբերության համաձայն՝ շինարարության թույլտվությունը համայնքներում տալիս է համայնքի ղեկավարը քաղաքաշինական բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի կողմից համակարգվող քաղաքաշինական թույլտվությունների առցանց տրամադրման համակարգի միջոցով՝ Կառավարության սահմանած կարգով:

ՀՀ կառավարության 19.03.2015թ. «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 596-Ն որոշման N 1 հավելվածի 9-րդ կետի համաձայն՝ համայնքի վարչական սահմաններում կառուցապատման նպատակով թույլտվությունները և այլ փաստաթղթեր տալիս է համայնքի ղեկավարը (...):

Քննարկվող պարագայում Ա.Սեդոյանի կողմից անցկացվել են վարույթի լսումներ, հետևաբար վերջինիս գործառույթն է վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ վարույթի մասնակիցների համար ապահովել արտահայտվելու հնարավորությունը և ապահովել լսումների ընթացքում քննարկումները, ինչը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 24-րդ հոդվածի իմաստով չի հանդիսանում գործի քննարկում և լուծում: Լսումների արդյունքներն

ամփոփվում են արձանագրությամբ, որը կցվում է վարչական վարույթին և գնահատման է ենթարկվում վարույթով որոշում կայացնող պաշտոնատար անձի կողմից: Այլ կերպ ասած՝ Ընկերության Դիմումի վերաբերյալ որոշումը կայացվելու է Երևանի քաղաքապետի կողմից:

Անդրադառնալով Բացարկի հիմքերին՝ հարկ է նկատել, որ Երևանի Ալիխանյան եղբայրների փողոցի հ.6/1 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի հ. 01/18-05/1-Մ-10735-761 աշխատանքային նախագիծը հաստատվելուց հետո չի վերահամաձայնեցվել, որպիսի պայմաններում Ա.Սեդոյանը դրա վերահամաձայնեցման հարցի քննարկմանը չէր կարող մասնակցած լինել:

Քննության առնելով Ա. Սեդոյանի կողմից հրապարակային կարծիք հայտնած լինելու մասին Բացարկի հիմքերում՝ նախևառաջ, շեշտենք, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն՝ բացարկ հայտնելու հիմք է առկա այն դեպքում, եթե մինչև գործի քննարկման ավարտը, տվյալ պաշտոնատար անձը հրապարակայնորեն արտահայտվել է գործի հնարավոր ելքի մասին կամ գնահատական է տվել գործի փաստական հանգամանքներին կամ, մինչև ապացույցների հետազոտումը, կանխավ գնահատական է տվել դրանցից որևէ մեկին:

Դավիթ Ազիզյանի կողմից բարձրացված հարցը վերաբերում է սույն թվականի օգոստոսի 1-ին հրավիրված լսումներին Ա. Սեդոյանի կողմից հայտնած դիրքորոշմանը, որը չի կարող մեկնաբանվել որպես «մինչև ապացույցի հետազոտումը կանխավ գնահատական տալ», քանի որ պետական համալիր փորձաքննության հանձնաժողովի կողմից 14.06.2022 թվականին տրված թիվ 93 եզրակացությունը մինչև սույն թվականի օգոստոսի 1-ը հրավիրված լսումները ներկայացված է եղել Երևանի քաղաքապետարան՝ դեռևս 2022 թվականի հունիսի 20-ին թիվ Դ-36927-22 դիմումին կից: Բացի դրանից՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքը չի նախատեսում որևէ ընթացակարգ, որը կպարտավորեցներ վարչական մարմնին վարչական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացող դիմումին կից ներկայացված (տվյալ դեպքում Դիմումին ի լրումն ներկայացված) փաստաթղթերը չհետազոտել մինչև վարչական վարույթով հրավիրված լսումները կամ ներկայացված ապացույցները հետազոտել միայն վարչական վարույթով լսումների ժամանակ: Հետևաբար, Ա.Սեդոյանի կողմից ամբողջությամբ իրավաչափ է պետական համալիր փորձաքննության հանձնաժողովի կողմից 14.06.2022 թվականին տրված թիվ 93 եզրակացությունը մինչև սույն թվականի օգոստոսի 1-ը հրավիրված լսումները հետազոտելը:

Տվյալ դեպքում Բացարկի հիմքերը չեն վկայում Ա.Սեդոյանի կողմից Դիմումի հնարավոր ելքի մասին դիրքորոշում հայտնելու կամ Դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ կանխավ գնահատական տալու մասին: Ինչ վերաբերում է Հանրային հեռուստաընկերությանը տված հարցազրույցին, ապա Ա. Սեդոյանի պնդումներն իրավաչափ են և հիմնված են եղել Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Հրաչյա Քարամյանի թիվ ՎԴ/2068/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2009 թվականի որոշմամբ ձևավորած դիրքորոշման վրա այն հաշվառմամբ, որ ընդունված վարչական ակտը (տվյալ դեպքում՝ շինարարության թույլտվությունը) օժտված է իրավաչության կանխավարկածով և ենթակա

է կատարման այնքան ժամանակ, քանի դեռ այն վարչական կամ դատական կարգով անվավեր չի ճանաչվել, ինչպես նաև չի կասեցվել դրա կատարումը:

Այսպիսով, Բացարկով ներկայացված հանգամանքները չեն կարող հիմք հանդիսանալ Ա. Սեդոյանի կողմից սուբյեկտիվ կամ աչառու լինելու մասին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 25-րդ հոդվածով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթով Ա.Սեդոյանին Դավիթ Ազիզյանի կողմից 2022 թվականի օգոստոսի 2-ին հայտնած բացարկը մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Recoverable Signature

X

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN HRACHYA 2302850092

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ